The **RSC BLOG** offers a series of informal publications on various issues of relevance, in both English and Armenian.

Unlike our peer-reviewed publications, RSC Blog entries are shorter, less academic and more opinion-oriented, aimed at offering a “rapid response” analytical assessment of timely events and developments.

RSC BLOG

No. 8 | 26 February 2016

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՞ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԱՄԱՅԱՅՈՒՄ

Հայկակ Արշամյան

2016թ. փետրվարի 24-ին Հայաստանի հանրապետական կուսակցության (ՀՀԿ) և Հայ հեղափոխական դաշնակցություն (ՀՅԴ) կուսակցության միջև կնքվեց Քաղաքական համագործակցության համաձայնագիր (http://www.president.am/hy/press-release/item/2016/02/24/President-Serzh-Sargsyan-Political-Coalition/):



Այս համաձայնագիրն արդյունք էր դեռևս 2015թ. հուլիսին սկիզբ առած քաղաքական քննարկումների, երբ իշխանությունների կողմից հրապարակվեց և շրջանառության մեջ դրվեց սահմանադրական փոփոխությունների նախագիծը: Սակայն հիշյալ համաձայնության ակունքները հասնում են մինչև 2014թ., երբ իշխանությունները հայտարարեցին սահմանադրական փոփոխություններ նախաձեռնելու գործընթացի մասին: ՀՅԴ պաշտոնական դիրքորոշումն այս հարցում հետևյալն էր. կուսակցությունը միշտ էլ կողմ է եղել համամասնական պառլամենտական կառավարման ձևին, հետևաբար նաև կողմ է շրջանառության մեջ դրված նախագծին: Նույն ջատագովությամբ, ՀՅԴ-ն պաշտպանեց 2015թ. դեկտեմբերի 7-ի սահմանադրական հանրաքվեն և ընդունեց դրա խիստ կասկածելի արդյունքները, որն էլ ի վերջո հանգեցրեց ՀՀԿ-ՀՅԴ քաղաքական համաձայնության ու դրանից բխող իշխանության պատասխանատվության համատեղ ստանձման:

Առաջին հայացքից շատ տրամաբանական թվացող համաձայնությունն ունի բազմաթիվ թաքնված շերտեր ու քաղաքական նման գործընթացների տրամաբանությանը հակասող կետեր, որոնց մի մասն արտացոլված է կնքված Քաղաքական համաձայնագրում, իսկ մնացյալի վերհանման համար անհրաժեշտ է վերլուծել Հայաստանի հասարակական-քաղաքական դաշտի վայրիվերումները, ինչպես նաև՝ վերջին տարիների ընթացքում ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակը:

Բուն համաձայնագրի տեքստը ընդհանուր առմամբ դեկլարատիվ բնույթ ունի, առկա են բազմաթիվ չհստակեցված դրույթներ, չկան բարձրացված հիմնախնդիրների լուծման մեխանիզմները, ինչպես նաև՝ համաձայնագիրը խոստովանությունն է երկրի քաղաքական

իշխանությունը երկար տարիներ մենաշնորհած ՀՀԿ-ի վարած քաղաքականության տապալման: Վերջինիս առումով խոսուն են ընդհանուր դրույթների առաջին և երկրորդ կետերը, որտեղ հնչեցվում է Հայաստանի Հանրապետության առջև ծառացած ոչ միայն արտաքին, այլև՝ ներքին մարտահրավերների հաղթահարման, ինչպես նաև՝ հասարակությունում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավման անհրաժեշտության մասին: Այսինքն, ՀՀԿ-ն, 1999-ից իշխանությունում լինելով, չի հաղթահարել ներքին մարտահրավերները (աղքատություն, միգրացիա, տնտեսական և սոցիալական բազմաթիվ խնդիրներ և այլն), իսկ հասարակության մեջ տիրող բարոյահոգեբանական մթնոլորտն այնքան է վատթարացել, որ անհրաժեշտություն է առաջացել այդ խնդիրը ներառել համաձայնագրում:

Համաձայնագրի հիմքեր են նշվում նաև Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագրում ամրագրված մոտեցումները, ինչպես նաև Սերժ Սարգսյանի 2016թ. փետրվարի 12-ի ելույթում նշված դրույթները: Ստացվում է, որ քաղաքական համաձայնագրի հիմքում ընկած է ոչ թե մշակված «ճանապարհային քարտեզ» կամ որևէ համատեղ ծրագիր, այլ՝ խորհրդանշական բնույթ կրող համահայկական հռչակագիրը, որն այդպես էլ մնաց թղթի վրա, և Սերժ Սարգսյանի ելույթը, որի թեզերը երկրում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտի և ներքին մարտահրավերների հակապատկերն էին: Փաստացի, 2008թ-ից կառավարություն ձևավորող նախագահը և նրա գլխավորած կուսակցությունը ոչ թե հենվում են իրենց իսկ կառավարության ծրագրերի, այլ՝ հռչակագրերի ու ելույթների թեզերի վրա:

Այստեղից էլ բխում է Ընդհանուր դրույթներում նշված վերջին կետի հակասականությունը, այն է՝ ՀՅԴ-ն և ՀՀԿ-ն համատեղ ստանձնում են ՀՀ կառավարության ծրագրերի իրականացման պատասխանատվությունը: Այլ կերպ ասած՝ չնայած համաձայնագրի հիմքում կառավարության ծրագրերը չեն, բայց կողմերը պատասխանատվություն են ստանձնում այդ ծրագրերի իրականացման համար: Գործող կառավարությունը լուծարվելու է 2017թ. պառլամենտական ընտրություններից հետո, այսինքն ՀՅԴ-ն ոչ միայն ստանձնում է առաջիկա մեկ տարվա, այլև անցած առնվազն չորս տարիներին ՀՀԿ-ի կազմած կառավարության գործունեության պատասխանատվությունը:

Հետաքրքրական է համաձայնագրի քաղաքական համագործակցության կազմակերպման կարգին վերաբերող III բաժնի 4-րդ կետը, որը խոսում է երկու կուսակցությունների միջև համագործակցության խորհրդի ստեղծման մասին: Խորհրդի նպատակն է քաղաքական համագործակցության աշխատանքների արդյունավետության, կանոնավոր միջկուսակցական շփումների ապահովումը և տեսակետների համադրումը: Այսինքն, կառավարությունից և Ազգային ժողովից դուրս ստեղծվում է մի մարմին, որտեղ էլ ձեռք են բերվելու բոլոր պայմանավորվածությունները և պարտադրվելու են կառավարման համակարգին:

Իսկ որո՞նք են կոնկրետ այս Քաղաքական համաձայնագրի, ինչպես նաև պառլամենտական ընտրություններից ընդամենը մեկ տարի առաջ նման համագործակցություն հաստատելու հիմքերը: Չէ՞ որ ՀՀԿ-ն բացարձակ մեծամասնություն ունի Ազգային ժողովում, ըստ այդմ՝ կառավարություն ձևավորելու մենաշնորհ ունի, տիրապետում է ֆինանսական բոլոր լծակներին և տնտեսական մենաշնորհներին: Կնքված համաձայնագիրը սրա պատասխանը չի տալիս, ուստի ակնհայտ է սույն համաձայնագրից բացի, կան նաև բանավոր կամ կուլիսային պայմանավորվածություններ:

Այսպես, համաձայնագիրը չի պարունակում ոչ միայն համագործակցության, այլև՝ այնտեղ նշված դրույթների կատարման ժամկետներ: Խոսք չի գնում հաջորդ պառլամենտական ընտրություններին երկու կուսակցությունների մասնակցության ձևաչափի մասին, բացակայում են սույն համագործակցության իրականացման մեխանիզմները:

Ի վերջո, ՀՀԿ-ՀՅԴ համագործակցությունը կարելի է դիտարկել 2015թ. փետրվարի 12-ին Սերժ Սարգսյանի ելույթի շրջանակներում, երբ ըստ էության պատերազմ հայտարարվեց «Բարգավաճ Հայաստան» կուսակցությանը, որի արդյունքում ամբողջովին թուլացվեց ՀՀԿ-ին մրցունակ և մեծ ռեսուրսներ ունեցող քաղաքական ուժը՝ ԲՀԿ-ն ու նրա դաշնակիցներ ՀԱԿ-ը և «Ժառանգությունը»: Հիշեցնենք, որ այս երեք կուսակցությունները համատեղ հանդես էին գալիս ընդդեմ սահմանադրական փոփոխությունների ու պառլամենտական կառավարման համակարգի:

Ըստ էության, Քաղաքական համաձայնագիրը քաղաքական դաշտի մոնոպոլացման գործընթացի շարունակությունն է, քանի որ Սերժ Սարգսյանի նախաձեռնությամբ սկսված այս համաձայնությամբ, այսպես ասած, «չեզոքացվեց» պառլամենտում տեղեր ունեցող ևս մի կուսակցություն: Ընդ որում, ՀՅԴ-ն այն քաղաքական կուսակցությունն է, որ որոշակի ազդեցություն ունի նաև սփյուռքում: Մյուս կողմից, ՀՅԴ-ի հետ համագործակցությամբ, Սերժ Սարգսյանը փորձում է չեզոքացնել իր գլխավորած ՀՀԿ-ի մեջ գոյություն ունեցող տարաձայնություններն ու խնդիրները, որոնք ավելի կխորանան գալիք պառլամենտական ընտրությունների շեմին: Այսինքն, քաղաքական համաձայնագրով երկու կուսակցություններին բերելով ընդհանուր դաշտ, Սերժ Սարգսյանը էլ ավելի բարձրացրեց իր դերակատարությունը ՀՀԿ-ի ներսում, արհեստական մրցակցություն խթանելով երկու քաղաքական ուժերի միջև:

The **Regional Studies Center** (RSC) is an independent think tank conducting a wide range of objective research and analysis, and implementing a number of educational and policy-related projects.

As a leading think tank based in Armenia, the RSC conducts research and analysis and develops policy initiatives in support of political and economic reform and conflict resolution in the broader South Caucasus region. Over the longer term, the RSC strives to elevate political discourse, deepen civic activism and broaden engagement in the public policy process.

Regional Studies Center (RSC)
60 Aram Street, No. 53
010 Yerevan, Armenia
Tel: (+374) 11.70.99.69
www.regional-studies.org